ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ. Էրզրում (Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, Հայաստան, ԳԱԱ հրատարակչություն, 1994, 180 էջ։

Վերջին տասնամյակում հայ պատմագիտական միտքը՝ ակտիվ ու տենդագին որոնումներ է կատարում Արևմտյան Հայաստանի էթնոժողովրդագրական հիմնահարցերի համակողմանի ուսումնասիրության ասպարեզում։ Խնդրի էությունը ոչ միայն բարոյական, այլև արդիական-քաղաքական շեշտադրությամբ է պայմանավորված։

Ներկայիս թուրքական պետական-պաշտոնական այրերն ու պատմաբանները հսկայական ջանքեր են գործադրում ապացուցելու, որ Արևմտյան Հայաստանի բնիկ տերը եղել է թուրքական տարրը և իբր թե բոլոր ժամանակներում էլ թյուրքական էթնոսը եղել է գերակշռող։ Թուրքական պատմաբանների նմանօրինակ խեղաթյուրումներով լեցուն «աշխատություններով» ողողված է ոչ միայն բուն թուրքական, այլև Արևմտյան Եվրոպայի և ԱՄՆ-ի գրաշուկան։ Այս պայմաններում հայ պատմաբանների մեծագույն խնդիրն է գիտական բարեխղճությամբ վերհանել ու արխիվային անհերքելի նյութերով ու փաստերով ներկայացնել Արևմտյան Հայաստանի յուրաքանչյուր նահանգի ու գավառի վարչաէթնիկական պատկերն ու հայ ազգաբնակչության թվաքանակը, հայկական բնակավայրերի տեղագրությունը, էթնոժողովրդական բնական կամ արհեստականորեն սարքված տեղաշարժերը։ Միայն այս եղանակով է հնարավոր իրական հակահարված տալ թուրքական հեղինակների բացահայտորեն ջինծու, քաղաքական անարդար նպատակներ հետապնդող նկրտումներին։ Այս առումով իրավ շնորհակալ աշխատանք է կատարել պատմական գիտությունների թեկնածու Աշոտ Մելքոնյանը, որը հրատարակել է Էրզրում նահանգի վարչաէթնիկական նկարագրին նվիրված խիստ ուշագրավ աշխատություն։

Էրզրումի (Կարին) նահանգը, որը զբաղեցնում է Արևմտյան Հայաստանի զգալի մասը, հայոց պատմության մեջ ունեցել է իր բացառիկ նշանակությունը և դարեր շարունակ եղել է Արևմտյան Հայաստանի կարևորագույն տարածություններից մեկը։ Ա. Մելքոնյանն իր աշխատության մեջ արխիվային նորահայտ փաստաթղթերի հիման վրա քննում և ներկայացնում է XIX դ. առաջին երեսնամյակին (1801—1830 թթ.) Էրզրում նահանգի էթնոժողովրդագրական գործընթացները։ Նա նշում է, որ Արևմտյան Հայաստանի, հատկապես Էրզրում նահանգի, պատմաաշխարհագրական, ժողովրդագրական հիմնահարցերի առաջին ուսումնասիրողը եղել է XVII դ. հեղինակ Հակոբ Կարնեցին, որի «Շինուած Կարնո քաղաքին...» ժամանակագրությունն՝ունի կարևոր աղբյուրագիտական նշանակություն։ Այն իրավունք է տալիս եզրակացնելու, որ XVII դ. կեսերին ևս, այսինքն Արևմտյան Հայաստանի՝ օսմանյան նվաճումից մեկուկես-երկու դար անց, Էրզրումի նահանգը և նրա հարակից գավառները առավելապես բնակեցված էին հայերով, իսկ թուրքական տարրը կազմում էր աննշան փոքրամասնություն։ Սակայն հետագա ժամանակներում տեղի ունեցած էթնիկական տեղաշարժերի հետևանքով արդեն XIX դ. առաջին տասնամյակներին Էրզրումի գավառները կորցրել էին բնակչության ազգային միատարրությունը։

Ա. Մելքոնյանն ընդգծում է, որ նախորդ դարերում օսմանյան կառավարողների կողմից զանազան լծակների օգնությամբ հայ բնակչության բնականոն աճի արգելակման, էթնիկական զիմահեղման երևույթները կրկնվեցին և նոր թափ ստացան նաև XIX հարյուրամյակի առաջին քառորդին։ Թուրքական պետության՝ հայության պլանավորված նոսրացման և ոչնչացման քաղաքականության, 1806—1814 թթ. քրդական միջցեղային բախումների, Տրապիզոնի նահանգից լազերի մշտական հարձակումների և 1820—1823 թթ. պարսկա-թուրքական պատերազմի ժամանակ ազգաբնակչության բռնագաղթի ու կոտորածի հետևանքով հայ բնակչության թիվը զգալիորեն նվազեց։

Ա. Մելքոնյանը բազմաթիվ արխիվային և տպագիր աղբյուրների հիման վրա մանրամասն քննական վերլուծության է ենթարկում հայ ազգաբնակչության տեղաշարժերը 1829—1830 թթ.՝ կապված ռուս-թուրքական ՞երթական պատերազմի հետ։ Թուրքական բռնություններից խուսափելու նպատակով, չսպասելով գաղթի պաշտոնական թույլտվությանը, 1829 թ. հոկտեմբերին արդեն գաղթականների առանձին խմբեր Էրզրումի, Բայազետի, Ալաշկերտի լիվաներից բռնում են գաղթի ճանապարհը։ Իսկ 1830 թ. մայիսի 15-ից սկսվում է Էրզրումի, Բաբերդի, Դերջանի, Քղիի, Սպերի, Վերին և Ներքին Բասենների, Թորթումի, Խնուսի գավառների հայ բնակչու-

թյան զանգվածային գաղթը դեպի ռուսաց տիրապետության սահմաններ։ Էրզրումի նահանգից հայ գաղթականների ստվար խմբերը՝ թվով 7 հազար ընտանիք մի քանի ամիս հետո բնավորվեցին հիմնականում Ախալցխայի, Ախալքալաքի և Նալկայի շրջաններում։ Արևմտահայ գաղթականների որոշ մասը հաստատվեց Շիրակի դաշտի գյուղերում և Փամբակում։

Արխիվային բազմաթիվ փաստերի համադրությամբ Ա. Մելքոնյանը ճշգրտում է, որ 1829—1830 թթ. Արևմտյան Հայաստանից գաղթել է ոչ թե 14 հազ. ընտանիք կամ 85—90 հազ. մարդ, ինչպես ընդունված է պատմական գրականության մեջ, այլ ընդամենը՝ մոտ 12300 ընտանիք կամ 74 հազ. մարդ, որից 9682 ընտանիք կամ 58 հազ. հոգի՝ Էրզրումի նահանգից։ Արևմտահայության զանգվածային գաղթը ունեցավ ծանր հետևանքներ։ Էրզրումը զրկվեց հիմնականում հայ առևտրականներից ու արհեստավորներից, անմշակ վիճակում մնացին հազարավոր հեկտար հողատարածություններ։ Հարյուրավոր հայկական գյուղեր դարձան անմարդաբնակ։

Ինչպես իրավացիորեն եզրակացնում է Ա. Մելքոնյանը, 1830—1831 թթ. սկսվեց մի նոր գործընթաց, որն ամբողջ XIX դ. և XX դ. առաջին տասնամյակներին դարձավ Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական զարգացման գլխավոր ուղղությունը։ Արևմտահայաստանի տարբեր գավառներից սկսեց հայ բնակչության հոսքը դեպի Ռուսաստանի նոր սահմաններն ու մերձակա գավառները՝ Բասեն, Ալաշկերտ, Նահին, Բայազետ։ Ընդ որում հեղինակն ընդգծում է, որ Ռուսաստանին հարակից շրջաններում ազգային և սոցիալական ճնշումն անհամեմատ թույլ էր, և պետական սահման անցնելու հնարավորությունն ավելի մեծ. այդ պատճառով հայ բնակչության հոսունությունն արևմուտքից արևելք ձևոք էր բերում քաղաքական երանգ։ Դեպի Ռուսաստան գաղթող արևմտահայ գյուղացիության բնակատեղիների մեծ մասն ընկավ թուրք և քուրդ մահմեդականների ձեռքը։ Անշուշտ, ճշմարիտ է հեղինակի այն դիտարկումը, որ արևմտահայության գաղթը որքան դառնաղետ հետևանքներ ունեցավ արևմտահայկական նահանգների ժողովրդագրական պատկերը խարխլելու առումով, միաժամանակ նաև դրական նշանակություն՝ Արևելյան Հայաստանի և Անդրկովկասի այլ շրջանների տնտեսության զարգացման, հայկական բնիկ տարրը ամրապնդելու համար։ Քանզի հենց արևմտահայ գաղթականների ջանքերով շենացան Արևելյան Հայաստանի հարյուրավոր բնակավայրեր։ Էրզրումի գաղթականների ջանքերով աճեց ու զարդացավ Նոր Ախալքալաքը։

Այսպիսով, Աշոտ Մելքոնյանի «Էրզրում» աշխատությունը յուրջ ներդրում է Արևմտահայաստանի էթնոժողովրդագրական հիմնահարցերի ուսումնասիրության գործում և հայ պատմագրանին ու հետազոտողին օգնում է խորությամբ ըմբռնելու ու լուսաբանելու XIX դ. առաջին երեսնամյակին Էրզրումի նահանգի վարչաքաղաքական պատմության կնճռոտ ու վիճահարույց մի շարք հարցերի ու հարցադրումների էությունը։ Որոշ հիմնահարցեր գիտականորեն հիմնավորված ու մեկնաբանված են միանգամայն նոր ու նորովի դիտակետից՝ շնորհիվ այն բանի, որ հեղինակն առաջին անգամ շրջանառության մեջ է դրել բազմաթիվ արխիվային փաստաթղթեր։

Ա. Մելքոնյանի աշխատությունը շահեկանորեն կարևորվում է նաև նրանով, որ հեղինակը ներկայացրել է Էրզրում նահանգի գավառների քարտեզները, ինչպես նաև հավելվածը, որտեղ գավառ առ գավառ մեկ առ մեկ տալիս է հայկական բնակավայրերի ցուցակները։

Ցանկալի կլիներ, որ հեղինակը անդրադառնար նաև Արևմտյան Հայաստանի մյուս նահանգների վարչաժողովրդագրական նկարագրի լուսաբանմանը և խնդրի ուսումնասիրությունը հասցներ մինչև 1915 թ. հայոց ցեղասպանությունը։

Այսօրվա ազգային ցարիոնքի բովում և նորանկախ հայոց պետականության կերտման պայմաններում գրախոսվող հետազոտությունը դրական նպաստում է հայ հասարակական-քաղաքական մտքի՝ դեպի տղղային արմատներ վերադարձին և ազգային մթնոլորտի հաստատմանը։

Ա. Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու